# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար աշխարհագրության լաբորատորիայի սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/42 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի փետրվարի 18-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/42 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի և «Մեգամարթ» ՍՊԸ-ի միջև 2026 թվականի փետրվարի 18-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/42 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի և «Մեգամարթ» ՍՊԸ-ի միջև 2026 թվականի փետրվարի 18-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/42 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը» սյունակով նշված «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները» բառերը փոփոխվել և շարադրվել են նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի մայիսի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները»:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**